«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 270-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների ,«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով՝ ՀայաստանիՀանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» N 270-Ն որոշման (այսուհետև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշման 2-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորներիվերաբերյալ տեղեկությունների ձևերը՝ համաձայն N 4 հավելվածի:»:

2) Որոշման 1-ին հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 26.1 և 26.2 կետերով.

«26.1.Լիցենզավորված իրավաբանական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N1129-Ն որոշման հավելվածի 4-րդ ցուցակում ներառված պրեկուրսորները Հայաստանի Հանրապետություն ներմուծելու կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանելու դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության սահմանով դրանց տեղափոխման պահից մեկ օրվա ընթացքում տեղեկություններն էլեկտրոնային եղանակով փոխանցում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ համաձայն սույն որոշման N 4 հավելվածով հաստատված ձևի:

26.2.Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրությամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N1129-Ն որոշման հավելվածի 4-րդ ցուցակում ներառված պրեկուրսորները Հայաստանի Հանրապետություններ մուծելու կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանելու վերաբերյալ իր դիրքորոշման մասին:»,

3) Որոշման 3-րդ հավելվածից հետո լրացնել նոր 4-րդ հավելված՝ համաձայն հ ավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

« » 2021թ.

ք.Երևան

Հավելված 4

Հայաստանի Հանրապետության կառավարության

2010 թվականի*մարտի 18-*ի*թիվ 270 -Ն *որոշման

Ձև 1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<>> _____ 20 թ.

h/h	Պրեկուրսորներներմուծողկազմակերպությանանվանումը, լիցենզիայիհամարը, տրմանամսաթիվը	Իրավաբանականհասցեն, գործունեությանհասցեն, պրեկուրսորներիպահեստավորմանվայրը	Պրեկուրսորներիանվանումը	Պրեկուրսորներիքանակը /չափմանմիավորը/
1	2	3	4	5

Ձև 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՑԱՐՏԱՀԱՆՎՈՂԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<>> _____ 20 թ.

h/h	Պրեկուրսորներարտահանողկազմակերպությանանվանումը, լիցենզիայիհամարը, տրմանամսաթիվը	Իրավաբանականհասցեն, գործունեությանհասցեն	Պրեկուրսորներիանվանումը	Պրեկուրսորներիքանակը /չափմանմիավորը/

1 2 3 4 5